

ՅԱՔՈՒԲ ՔԱԴՐԻ ՔԱՐԱՕՍՄԱՆՕՂԼՈՒ.
ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Քենալական շարժման արդյունքում թուրքական ազգային ինքնագիտակցության արթնացումը, երկրում անկաջված բարենորոգումները, և այդ ամենի զլխավոր առաջնորդ ու գաղափարախոս Քենալ Աթաթուրքի կյանքն ու գործունեությունն իրենց արտացոլումը գտան թուրք գրականության մեջ: Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական անցուղարձը մեծ աշխուժություն մտցրեց նաև գրական կյանքում:

Գրականության զլխավոր խնդիրներից մեկը դարձավ քենալական (միլլի) շարժման արտացոլումը: Տվյալ ժամանակաշրջանում թուրք գրականության զարգացման և քենալիզմի գաղափարների քարոզչության հարցում մեծ դեր խաղաց հատկապես թուրքական մամուլը, որին աշխուժորեն թղթակցում էին ժամանակի հայտնի գրողները¹: Երկրի ապագան և հեռանկարները հուզում էին բոլորին, և հենց այդ շրջանում ձևավորվում են ծայրաբևեռներ կյանքի բոլոր ոլորտներում: Գրականության մեջ ևս ակնհայտ են դառնում այն միտումները, որոնք գոյություն ունեին թուրք հասարակության մեջ: Հայտնի է, որ նրանք բաժանված էին երկու մասի՝ մի մասը սուլթանի կողմնակիցներն էին, իսկ ավելի ստվար զանգվածը Քենալ Աթաթուրքի և թուրք ազգային գաղափարների պաշտպաններն էին: Սկսեցին փլուզվել մինչ այդ մեծ ծանաչում գտած ընկերությունները, որոնք միավորում էին տարբեր գրական և գեղագիտական հայացքներ ունեցող հեղինակներին:

Գրական կյանքում քենալական շարժման, Քենալ Աթաթուրքի ջատագովությամբ աչքի ընկնող գրողների մեջ իր ուրույն գրական ժառանգությամբ, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ հատկապես առանձնանում է Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլուն: Նա 20-րդ դարի թուրք գրականության խոշորագույն դեմքերից է նովելիստ, հրապարակախոս, արձակագիր, պոետ, մենագրությունների և հուշագրությունների հեղինակ: Քադրին մեկն էր այն մարդկանցից, որ անմիջականորեն կանգնած էր «քենալիզմ» գաղափարախոսության ակունքներում և համարվում էր Քենալ Աթաթուրքի մտերիմներից:

¹ Այդ մասին տե՛ս Петросян Ю. А., Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII-XX в.), изд-во, "Наука", Москва, 1985.

Քաղրին ծնվել է 1889թ. մայիսի 27-ին, Կահիրեում, հարուստ ընտանիքում: Որոշ ժամանակ անց նրա ընտանիքը տեղափոխվում է Իզմիրից (Չմյուռնիա) ոչ հեռու գտնվող Մանիսե կոչվող գավառական քաղաքը, որտեղ էլ Յաքուբ Քաղրին ստանում է կրթությունը: Մեկ տարի անց, Մանիսեի ռուշթիեյում սովորելուց հետո, 1903թ. Քաղրին ընդունվում է Իզմիրի վարժարան², սակայն ուսումը չի ավարտում: Այդ տարիներին նա ծանոթանում է հայտնի պանթուրքիստ նովելիստ Օմեր Սեյֆեդդինի և այլ երիտասարդ գրողների հետ³: 1906-1908թթ. նա սովորում է Եգիպտոսում ֆրանսիական Ֆրեյլեր քոլեջում: 1908թ., ընտանիքի հետ վերադառնալով Ստամբուլ⁴, ստանում է իրավաբանական և բանասիրական կրթություն: Նույն թավականին դառնում է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ:

1908թ. սկսելով իր գրական գործունեությունը՝ Քաղրին անցել է բազմաբովանդակ ճանապարհ: Նրա ստեղծագործությունները բազմազան են, ինչպես թեմատիկ, այնպես էլ ժանրային առումով, որոնք ընդգրկում են 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի 50-60-ական թթ.՝ մի ընդարձակ ժամանակաշրջան, երբ Թուրքիայում տեղի ունեցած քաղաքական-հասարակական բուռն իրադարձություններն իրենց կնիքը թողեցին նաև Քաղրիի ստեղծագործությունների վրա⁵:

Քաղրիի գրական և քաղաքական գործունեությունը սկսվել է միաժամանակ: Նրա առաջին ստեղծագործություններն արտահայտում են երիտասարդ հեղինակի բարդ և հակասական որոնումները, ինքնուրույնության ծգտումն արվեստում: Հեղինակի այս շրջանի ստեղծագործությունները կրում էին միայնության զգացումներ: Սիա այդ գաղափարն էր նա բարձրացնում «Աստղերի միայնություն» արձակ բանաստեղծությունում, ըստ որի՝ մարդկանց միջև գոյություն չունի և չի կարող լինել իսկական մտերմություն⁶: Սկզբնական տարիներին Քաղրին արվեստի մեջ գովերգում էր արիստոկրատիզմը: Նրա առաջին ստեղծագործությունը «Նիրվանա» (Nirvana, 1909) մեկ գործողությամբ պիեսը, իրենից ներկայացնում է շոպենհաուերյան փիլիսոփայության գրական տարբերակը՝ միայնության պաշտամունքով, նիրվանայի միստիկական իդեալով⁷:

² Şükran Kurdakul, Çağdaş Türk Edebiyatı, c. 2, 4-üncü basım, Ankara, 1994, s. 86.

³ Sayit Kemal Karaalioglu, Türk edebiyatçılar sözlüğü, Yelken Basımevi, İstanbul, 1962, s. 306.

⁴ Anabritanika, Genel Kültür Ansiklopedisi, İstanbul, Cilt 18, s. 155.

⁵ Старостов Л. Н., Заметки о современной турецкой прозе, Народы Азии и Африки, изд. Акад. Наук, Москва, 1961, N 1, с. 115.

⁶ Kadri Yakup, Nur Baba, İletişim Yayınları, İstanbul, 1996.

⁷ Şükran Aktaş Ş., Yakup Kadri Karaosmanoğlu, Kültür ve Turizm Bakanlığı Yayınları, Ankara, 1987, s. 19-22. Айзенштейн Н. А., Из истории турецкого реализма, Москва, "Наука", 1962, с. 144.

Գրողի սկզբնական շրջանի ստեղծագործություններին բնորոշ էր միաստիցիզմը, պեսիմիզմը, սիրո թեման, որը նա մեկնաբանում էր որպես «միակ և ամենակուլ զգացմունքը մարդու կյանքում»:

1909-1910թթ. Յաքուբ Քադրին մտավ թուրք գրականության մեջ որպես «Ֆեջր-ի Աթը» գրական հանդեսի անդամ ընդունելով նրա «արվեստն արվեստի համար» կարգախոսը: Այս հանդեսին անդամակցում էին նաև ժամանակի հայտնի գրողներ Ահմեթ Չաշիմը, Էմին Բյուլենբը, Ռեֆիե Չալիդը և ուրիշներ: Գրական այս միավորման նպատակն էր ուղղորդել ազգային լեզվի և մշակույթի զարգացումը: Նրա պարբերականը գոյատևել է մինչև 1944թ. մայիսի 26-ը և տպագրվել է 2464 համար⁸:

Դեմց սկզբից Քադրին զբաղվել է նաև հրապարակախոսությամբ: 1910թ.-ից սկսած՝ նա բազմաթիվ հոդվածներով է հանդես եկել թերթերում և պարբերականներում: Նրա ստեղծագործությունները տպագրվում էին Muhit, Siir ve Tefekkât, Servet-i Fânun, Râbab, Târk Yurdu, Peyam-ı Edebi, Yeni Mecmua ve İkdâm ժամանակի հայտնի ամսագրերում:

⁸ «Ֆեջր-ի Աթը» գրական պարբերականը ստեղծվել է թուրք գրականության զարգացման գործում կարևոր դեր ունեցած «Սերվեթ-ի Ֆյունուն» ("Servet-i Funun", 1891-1901թթ.) գրական հանդեսի հիմքի վրա: «Սերվեթ-ի Ֆյունուն»-ի շուրջը համախմբված գրողների ստեղծագործական մոտեցումները միատարր չէին: Յուրացնելով եվրոպական գրականության տարբեր ուղղությունները՝ թուրք գրողները փորձում էին դրանք ծառայեցնել ազգային գրականության խնդիրներին: «Սերվեթ-ի Ֆյունուն»-ի ծաղկման շրջանը կապվում է Թևֆիե ֆիքրեթի անվան հետ, ով խմբագրել է հանդեսը 1896թ.-ից փաստորեն վերածելով այն «Նոր գրականության» ("Edebiyat-ı Cedide") հոսանքի օրգանի: Այնուհետև հանդեսը խմբագրել է Հյուսեյին Ջահիթը (1874-1957)՝ գրող, լրագրող, թարգմանիչ, քաղաքական գործիչ: Դասավանդել է թուրքերեն և ֆրանսերեն: 1908թ. Թևֆիե ֆիքրեթի ու Հյուսեյին Բյազզմ Քադրիի հետ սկսել է հրատարակել «Թանին» թերթ: Համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո երիտթուրքական այլ պարագլուխները հետ աքսորվել է Մալթա կղզի: Աքսորից վերադառնալով կրկին սկսել է հրատարակել «Թանին» թերթը (1922-1925թթ., հետագայում նաև 1943-1947թթ.): Ընտրվել է Օսմանյան խորհրդարանի պատգամավոր (Ստամբուլից 1908թ.) և ԹԱՍՏ-ի պատգամավոր (Ստամբուլից ու Կարսից 1939-1954թթ.): Հրատարակել է վեպեր, պատմվածքների ժողովածուներ, ինչպես նաև Թալեթ-թի «Նուշերի» (Talat Paşanın Hatıraları, İstanbul, 1946) առաջաբանը (Տե ս. Ա. Հ. Փափագյան, Թուրքական պետական և քաղաքական գործիչները արևմտահայերի մասին. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XII, Թուրքիա: Եր., 1985, էջ 91-97): Հյուսեյին Յալչընի հուշագրությունները տե ս. Edebi Hatıralar (1935), Նոր հրատ. Edebiyat Anıları (1975), Siyasal Anılar (1976): Սամրանասն տե ս. Doğan Çetinkaya, Hüseyin Cahit Yalçın: Modern Türkiye' de Siyasî Düşünce. Cilt 3, Modernleşme ve Batıcılık (İletişim Yayınları 805), 3. Baskı. İstanbul, 2004, s. 314-329. Şemsettin Kutlu. Servetifnün Dönemi Türk Edebiyatı Antolojisi. s. 235-258. Հանդեսը փակվում է 1901թ., կրկին սկսում հրատարակվել 1908թ. սահմանադրության հռչակումից հետո՝ նախ որպես օրաթերթ, ապա՝ որպես շաբաթական հանդես, իսկ 1910թ. վերածում է «Ֆեջր-ի Աթը» միավորման պարբերականի:

1913թ. Բարասմանօղլուն գրում է իր առաջին «Մի դեպք» ("Bir Serencam") պատմվածքը:

Սինչև 1916թ. կարդացել է դասախոսություններ գրականություն և փիլիսոփայություն առարկաներից: 1912թ. նա տառապում էր տուբերկուլյոզով և միայն 1916թ. բուժման նպատակով մեկնում է Շվեյցարիա և այնտեղ մնում երեք տարի: Ծանոթանում է Փարիզից վերադարձած Յահյա Քեմալի հետ և նրա ազդեցությամբ սկսում է ուսումնասիրել հունական ու լատինական աղբյուրները, խորացնել իր գիտելիքները արևելյան դիցաբանության ու միստիցիզմի ուղղությամբ:

Սինչև Առաջին համաշխարհային պատերազմը Յաքուբ Քադրին կապեր է ունեցել նաև աղանդավորների հետ: Դերվիշական սովորություններն ուսումնասիրելով Քադրին գրում է «Նուր Բաբա» (Nur Baba) վեպը, որում քննադատության է ենթարկում հոգևորականությանը և ավատամահմեղական ավանդույթները⁹:

Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմները, դրանց հասցրած չարիքները շրջադարձային եղան Յաքուբ Քադրիի գեղագիտական հայացքներում. նա աստիճանաբար սկսեց հեռանալ «արվեստն արվեստի համար» սկզբունքից: Այդ տարիներին երկիրը ցնցած իրադարձություններն օգնեցին Քադրիին հասկանալ «մաքուր արվեստի» իր գեղագիտական դիրքորոշման սխալականությունը:

Սուլդոսի գինադադարից հետո (1918թ.) նա իրեն ամբողջովին նվիրեց քեմալական շարժման լուսաբանմանը: Հետևելով ամենօրյա դեպքերին Քադրին Միլլի շարժմանը աջակցում էր մամուլում հրապարակած իր հոդվածներով: 1921թ. նա տեղափոխվում է Անկարա, լինում Անատոլիայում (նկատի է առնվում Թուրքիայի փոքրասիական տարածքը): Որպես պաշտոնյա չըջում Քյոթահիայում, Սիմալում, Գեղիզում, Եսիլշեհիրում, Սաքարիայում, ականատես լինում «օկուպացված» գյուղերում ու քաղաքներում քեմալականների մղած կռիվների: Միլլի շարժման հաղթանակից հետո, Յաքուբ Քադրին 1923-31թթ. Ազգային ժողովում ընտրվում է որպես Մարդինի, ապա 1931-34թթ. որպես Մանիսայի պատգամավոր: 1923թ. նա ամուսնանում է Լեհման Հանունի հետ: 1923թ. վերադարձարկվում է իր «Ծերունի Նուրը» ("Nur Baba") և «Վարձու առանձնատունը» ("Kiralık Konak") ստեղծագործությունները:

Բուժման նպատակով 1926թ. Քադրին երկրորդ անգամ է մեկնում Շվեյցարիա: Այս այցելություններն իրենց մեծ ազդեցությունը թողեցին Քադրիի գրչի վրա: 1927թ. նա հրատարակում է իր «Վճռական գիշեր» ("İhtkâfım

⁹ Sb u Kadri Yakup, Nur Baba, İletişim Yayınları, İstanbul, 1996.

Gecesi"), 1928թ. «Սոդոմ գոմոր» ("Sodom ve Gomore") վեպերը: 1932 թվականը Քաղրիի համար առանձնակի կարևորություն ունեցավ: Նա գաղափարական իր համախոհների Վեղաթ Նեդիմի Թյորի, Բուիրան Սաֆ Բելզեի, Շեվքեթ Ալդեմիրի հետ հրատարակում է «Կադրո» ("Kadro") ամսագիրը, որը գրական-գեղագիտական բանավեճերի և քննարկումների մի նոր հնարավորություն է ընձեռում թուրք գրողներին: Ամսագրում հրապարակած հոդվածներից մեկում Յաքուբ Քաղրիին այսպես է մեկնաբանում իր գեղագիտական հայացքներում կատարված շրջադարձը. «*Ի վերջո արվեստը արտացոլում է որոշակի դարաշրջան: Ժողովրդից մեկուսացած արվեստը չունի ոչ իմաստ, ոչ արժեք, իսկ արվեստը առաջին հերթին պետք է պատկանի ժողովրդին*»¹⁰:

Քեմալական շարժման տարիներին Յաքուբ Քաղրին փորձում է սահմանել նոր սերնդի գրականությանը ներկայացվող պահանջները: Թուրք գրականագետ Գ. Բուրդեթն իր ուսումնասիրության մեջ, անդրադառնալով Քաղրիի գրական ժառանգությանը, գրում է. «Նա ցանկանում էր ստեղծել այնպիսի գրականություն, որ կխոսի ոչ թե անձնական թախծի, ապրումների, ընտանեկան անախորժությունների, այլ նաև մարդկային, ազգային կարիքների մասին»¹¹: Գեղագիտական դիրքորոշման վերանայումը փոխեց նախ Քաղրիի վերաբերմունքը գրական լեզվի նկատմամբ: Տասը տարի առաջ նա ամբողջովին մերժում էր խոսակցական լեզվի մերժեցումը գրականի հետ: Այժմ մեղմացնելով իր դիրքորոշումը նա պնդում էր, որ կենդանի խոսքը գրականության լեզուն չէ, այլ կյանքի, ժողովրդի լեզուն: Քաղրին կոչ էր անում հրաժարվել օսմաներենից: Սակայն նա ընկավ մեկ այլ ծայրահեղության մեջ. նրա բառապաշարում ներմուծվեցին ֆրանսերեն բառեր¹²: Այսպիսով, հրաժարվելով միստիցիզմից, դեկադենտական արվեստից, նա հարում է «հասարակայնորեն օգտակար արվեստի» հետնորդներին և ստեղծագործության նյութ դարձնում իրական կյանքը¹³:

Հանրապետության հռչակումից հետո Քաղրին ընդունում է ժողովրդահանրապետական կուսակցության քեմալիզմի հիմնական վեց սկզբունքները, որոնք երկրում ամրակալվեցին որպես Թուրքիայի կայացման զխաղոր ուղեցիկներ: Քեմալականներն առերևույթ թուրքական մացիոնալիզմը «մաքրեցին» պանթյուրքիստական և պանիսլամիստական շերտանստավածքներից: «Նրանք

¹⁰ Yakup Kadri, Bir Kassa, bir hisse, "Kadro", 1933, Dergisi II, s. 14.

¹¹ Kurdet G., Türk Edebiyatında Hikaye ve Roman, İstanbul, 1967.

¹² Yakup Kadri Karaosmanoglu: Yaşamı, sanatı, yapıtlarından seçmeler/derleye, Bilgi Yayınevi İstanbul, 1993, s.5. Տե՛ս նաև Яковлева Н. П., Турецкий рассказ, Новейшее премия 20-30 гг. XX в., Л. ЛГУ, 1988, с. 6-7.

¹³ Аликсеева Л. О., Очерки по истории турецкой литературы (1908-1939 гг.), с. 182-183.

նույնիսկ «թյուրքչուլուք» տերմինը, որը նշանակում էր նաև թուրքիզմ, այսինքն պանթյուրքիզմ, փոխարինեցին «միլլիյեթչիլիք» (Milliyetçilik) (հետագայում «ուլուսչուլուք») տերմինով, որ նշանակում է նացիոնալիզմ»¹⁴։ Սակայն ինչպես ցույց են տալիս պատմական հետազա գարգացումները, քեմալականները բոլորովին էլ չեն հրաժարվում թուրքիզմից, այլ այդ գախափարախոսությանը հաղորդում են նոր որակ ու բնույթ։

Միլլիյեթչիլիքը հռչակվեց որպես Քեմալ Աթաթուրքի սկզբունքներից մեկը և այն ընթնվեց որպես պայքար թուրք ազգի անկախության համար։ Մյուս մնացած հինգ սկզբունքներն են ժողովրդականություն (Halkçılık), այսինքն ժողովրդական սովերեյնության ճանաչում և դրա հետ մեկտեղ դասակարգերի և դասակարգային պայքարի առկայության ժխտում «միասնական թուրք ժողովրդի մեջ», հեղափոխականություն (Devrimçilik), այսինքն հավատարմություն քեմալական հեղափոխության գաղափարներին, հանրապետականություն (Cumhuriyetçilik), այսինքն հավատարմություն կառավարման հանրապետական ձևին, էտատիզմ (Devletçilik), այինքն պետական սեկտորի զարգացում էկոնոմիկայի, գլխավորապես արդյունաբերության, պետական կապիտալիզմի մեջ, լայիցիզմ (աշխարհականություն) (Layiklik) այսինքն կրոնական բոլոր գործերի անջատում պետական գործերից և դպրոցի ազատում մուսուլմանական հոգևորականության ազդեցությունից¹⁵։

Յաքուբ Քադրին կանգնեց Քեմալ Աթաթուրքի գաղափարների և քաղաքականության պաշտպանի դիրքերում։ Նրա հիմնադրած "Kadro" ամսագիրը նպատակ ուներ աջակցել քեմալական հեղափոխության գաղափարների տարածմանը, մասնավորապես լուսարանել էտատիզմի կարևորությունն ու նշանակությունը երկրի հետագա կայացման համար¹⁶։

Այդ շրջանի թուրք գրողների մեծ մասը, լինելով Աթաթուրքի ժամանակակիցները, շփվել էին նրա հետ և իրենց պարտքն էին համարում հրատարակել հուշեր, պատմվածքներ, հրապարակախոսական նյութեր՝ նվիրված Աթաթուրքին՝ գրեթե իդեալականացնելով նրա կերպարը։ Յաքուբ Քադրին քեմալական շարժմանը նվիրեց մի ողջ ժողովածու՝ «Պատմավածքներ ազգային պայքարի մասին» (Milli Savas hikayeleri)¹⁷։ Սիւս թե ինչպես է Քադրին բնութագրում Քեմալ Աթաթուրքին. «Այդ հզոր մարդը միշտ արտահայտում էր սիրալիրություն և մեծահոգություն կարգին մարդկանց հանդեպ։ Ոչ մի վարկյան

¹⁴ Երենեն Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 275։

¹⁵ Երենեն Դ., Մույն տեղում։

¹⁶ Aktas S., Yakup Kadri Karaosmanoglu, Kültür ve Turizm Bakanlığı Yayınları, Ankara, 1987, s. 19.

¹⁷ Karaosmanoglu, Yakup Kadri, Milli Savas hikayeleri, Istanbul, 1997, 188s.

նա չէր կորցնում իր սառնասրտությունն ու արժանապատվությունը: Նրա կողքին թուրքերը ծեռք էին բերում ուժ և վստահություն: Նա հավատ էր ներշնչում հաղթանակների նկատմամբ, որովհետև ինքն էր համոզված մեր գործի արդարության մեջ»¹⁸:

Քաղրին Աթաթուրքին պատկերում է որոշակի գերբնական ուժով օժտված. «Նա կարողանում է կանխագգալ մոտալուտ փորձությունը: Դեռ ավելին, նա մարդկանց գուշակում է առաջին հայացքից»¹⁹: Աթաթուրքին ներկայացնելով որպես ազգասիրության և հայրենասիրության մարմնացում՝ Քաղրին գրում է. «Ամենօրյա գործերում հանդես բերած սառնասրտությունն ու համբերատարությունը վերածվում է գիշատիչ վայրագության, երբ խոսքը վերաբերում է հայրենիքի անվտանգությանն ու պատվին: Բավական էր լսեր մի բառ ուղղված Թուրքիայի դեմ, լինի դա երկրի ներսում, թե աշխարհի ամենախուլ անկյունում, նա անմիջապես զգուշանում է և պատրաստվում հարձակման»: Աթաթուրքի ռազմական, քաղաքական հաջողությունները ոգևորել էին թուրք գրողներին և նրանք դադարել էին Քեմալին դիտել որպես սովորական մահկանացու: Քեմալը շատերի ստեղծագործություններում ներկայանում էր որպես լեգենդար եակ՝ օժտված գերմարդկային հատկություններով:

Սակայն թուրք գրողները, այդ թվում և Յաքուբ Քաղրին, իրենց ստեղծագործություններում որևէ խոսք չեն ասում ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ Սուստաֆա Քեմալի իրականացրած ցեղասպան քաղաքականության մասին, չըջանցում են Քեմալի ոճրագործությունները հայերի, նորաստեղծ Հայաստանի Հանրապետության, հույների, ասորիների, քրդերի նկատմամբ: Եվ ընդհանրապես Յաքուբ Քաղրիի ստեղծագործությունները հագեցած են ոչ մուսուլմանների դեմ կոպիտ, վիրավորական արտահայտություններով, ավելին՝ բացասական կերպարներից շատերը հենց ոչ մուսուլմաններն են (հիմնականում հույները): Այսինքն՝ կարող ենք ասել, որ նա իր ստեղծագործություններով նպաստել է թուրքական հասարակության մեջ ոչ մուսուլմանների՝ որպես թշնամու կերպարի, էլ ավելի արմատավորման գործին:

Իրականում քեմալական գաղափարախոսությունը խարսխվում էր թուրքիզմի վրա, իսկ այն չէր սահմանափակվում «նոր Թուրքիայի» շրջանակներով, այն շուտով վերածում է պանթուրքիզմի: Թեև Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրելուց հետո Թուրքիան պաշտոնապես հրա-

¹⁸ Караосманоглу Я. К., Дипломат поневоля, Воспоминания и наблюдения, сокращенный перевод с турецкого Г. Александрова. Изд.-во "международные отношения, Москва, 1966, с. 27-28.

¹⁹ Караосманоглу Я. К., Дипломат поневоля, с. 35.

ժարվում է պանթուրքիզմի քաղաքականությունից, բայց հետագա դեպքերը ցույց տվեցին, որ «նոր Թուրքիայի» կառավարողները միայն խոսքով են հրաժարվել թուրք ազգային բուրժուազիայի քաղաքական իդեալն իրականացնելուց: Ինչպես ցույց է տալիս հետագա դեպքերի զարգացումը, քեմալականները թուրքվին էլ մտադիր էին հրաժարվելու անցյալի ռասսայական-շովինիստական քաղաքականությունից²⁰: Ա. Ֆ. Միլլերն այս կապակցությամբ գրում է, որ քեմալական ագրեսորները և շովինիստները, ձգտելով «վերջ տալ Դալաստանի պետական գոյությանը», միաժամանակ երազում էին պանթուրքական պլանների վերածնունդ մասին»²¹: Քեմալականներին հաջողվեց «հակաիմպերիալիստական» ուժի, համաշխարհային հեղափոխության ջատագովի և խորհրդային երկրի «բարեկամի» վեդարի ներքո կենսագործել իրենց ռասիստական ծրագրերը: Հատկանշական է նաև այն, որ Քեմալ Աթաթուրքի շրջապատը և քեմալական շարժման հիմնական ուժը նախկին երիտթուրք սպաներն էին:

Թուրք գրողները, գովերգելով քեմալական (միլլի) շարժումը, կոչելով այն «ազգային ազատագրական պայքար», ի սկզբանե փորձում են քողարկել այդ շարժման իսկական շովինիստական էությունը: Դրա վառ ապացույցն է Յաքուբ Քադրիի «Պատմավածքներ ազգային պայքարի մասին» ժողովածուն, որտեղ հեղինակը բարձրաձայնում է միայն թուրք գյուղացու կրած զրկանքների, ցավի ու տառապանքի մասին, որևէ խոսք չգրելով կողք-կողքի ապրող ոչ թուրք ժողովուրդների կրած կորուստների, սարսափների ու ոչնչացման վերաբերյալ:

1932թ. տպագրվում է Յաքուբ Քադրիի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը «Օտարը»²², որտեղ հեղինակն անդրադառնում է մտավորականության - հասարակ ժողովուրդ հարաբերություններին: Վեպի վերնագիրն արդեն իրատեսական գնահատական է թուրք հասարակության երկու հատվածների հարաբերություններին: Արհեստականորեն պարտադրված քեմալական այն սկզբունքը, թե Թուրքիայում չկան դասակարգեր, իրական կյանքում ցույց է տալիս իր սնանկությունը: Ընդ որում, պետք է նշել, որ այդ օտարությունը երկուստեք է, այսինքն՝ թուրքական գյուղացիության համար մտավորականները նույնքան օտար էին, ինչքան վերջիններիս համար գյուղացիները: Եվ ինչքան էլ մտավորականները, որոնք մեծ մասամբ քեմալականներ

²⁰ Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարախոսությունը և քաղաքականությունը, «Հայաստան» հրատ., Երևան, 1986, էջ 511:

²¹ Миллер А. Ф., Краткая история Турции, ОГИЗ-Госполитиздат, Москва, 1948, с. 139.

²² Karaosmanoğlu, Yakup Kadri, Yaban, İletişim Yayınları, İstanbul, 1948, 221s. Karaosmanoğlu, Yakup Kadri, Yaban, İletişim Yayınları, 1970, s. 262.

էին, ձգտում էին կյանքի կոչել “առանց դասակարգերի հասարակություն” գաղափարը, միննույն է դա չէր ստացվում, քանի որ նախ տարբեր էին նրանց աշխարհընկալումները, մտածելակերպերը, կենսակերպերը և երկրորդ՝ նրանք իրականում իրար չէին ճանաչում, այսինքն՝ օտար էին: Վեպի գլխավոր հերոս քեմալական սպա Ահմեթ Ջելալի մտորումները գյուղացիության մասին լավագույնս ի հայտ են հանում նրա իրական և խորքային վերաբերմունքը այն զանգվածի հանդեպ, որի հետ նա ցանկանում էր մերվել:

1932 և 1934թթ. Քադրին լինում է Խորհրդային Միությունում և ելույթ է ունենում սովետական գրողների առաջին համամիութենական համագումարում, որտեղ հանդես է գալիս թուրք գրականության մասին ելույթով: Նրա մի քանի պատմվածքները թարգմանվեցին ռուսերեն²³: 1934թ. Յաքուբ Քադրի Քարասոմանոօղլուն անցնում է դիվանագիտական ծառայության Ալբանիայում, ապա 1935-39թթ Չեխոսլովակիայում, 1939-1940թթ. Յուլանդիայում, 1942-1949թ Շվեյցարիայում, 1949-1951թթ Իրանում: Քադրին իր դիվանագիտական ծառայության մասին գրել է «Կամքին հակառակ դիվանագետը» (“Zoraki Diplomat”) հուշագրությունը, որն ավելի շատ իր ժամրային կառուցվածքով հիշեցնում է ինքնակենսագրական վեպի²⁴: Նա իր այս գործը գրել է 1953-1954թթ., երբ դեռ «սառը պատերազմի» սպառնալիքները շարունակվում էին: Բնական է, որ այս ամենն իրենց որոշակի հետքն են թողել Քադրիի ստեղծագործությունների, ինչպես նաև հեղինակի քաղաքական շատ իրադարձությունների գնահատականների վրա: Թեև Քադրին հայտնի է որպես գրող, սակայն նա այստեղ հանդես է գալիս որպես փորձառու դիվանագետ: Ռեալիստական նկարագրումներով Քադրին ներկայացնում է իր ժամանակի իրականությունը: Նա փորձում է բացահայտել իրեն ժամանակակից դիվանագիտության էությունն ու մեթոդները: Յեղիմակն իր այս գրքում հատուկ ուշադրության է արժանացրել իր և Քեմալ Աթաթուրքի հանդիպմանը: Գրքի բազմաթիվ էջերում, երբ խոսքը վերաբերում էր Մուսթաֆա Քեմալին, հեղինակի խոսքը դառնում է ավելի վառ, հյուսթեղ: Նրա սերն ու հարգանքը անսահման է «թուրքերի հոր» հանդեպ: Այդպես էին կոչում Քեմալին իր հայերնակիցները²⁵: Գրքում Քադրին փորձում է հանդես գալ որպես թուրքական ազգային բուրժուազիայի լիբերալ հայացքների կրող: Նա նաև խցստ մերկացուցիչ քննադատությամբ նկարագրում է հիտլերյան սանձարձակությունները եվրոպական երկրնե-

²³ Караосманоглу Я. К., Дипломат поневолия, с. 5.

²⁴ Karasmanoglu, Yakup Kadri, Zoraki diplomat, İletişim Yayınları, İstanbul, 1984 Տե՛ս նույնի ռուսերեն թարգմանությունը՝ Караосманоглу Я. К., Дипломат поневолия, Воспоминания и наблюдения, сокращенный перевод с турецкого Г. Александрова.

²⁵ Караосманоглу Я. К., Дипломат поневолия, с. 4.

րում: Քաղրիի վերաբերմունքը ֆաշիզմի նկատմամբ խիստ բացասական էր: Նա իր այս ստեղծագործության մեջ քննադատում է ֆաշիստական հանցագործությունները և նրա հովանավորներին: Սակայն նա չի կարողանում հաղթահարել իր դասակարգային աշխարհայացքի շրջանակները և ամբողջությամբ բացահայտել բուրժուական հասարակությունում ևս առկա սոցիալական հակասությունները: Թեև խստորեն քննադատում է անարդարություններն ու բռնությունը և խորությամբ հավատում բուրժուական դեմոկրատիային, սակայն որևէ քննադատական խոսք չի ուղղում իր իսկ երկրի ներսում հենց այդ տարիներին ազգային փոքրամասնությունների հանդեպ կրկին իրականացվող բռնությունների ու դաժանությունների դեմ²⁶:

Այդ տարիներին նա գրում է իր «Աքսոր» ("Bir Sürgün", 1937)²⁷, «Համայնապատկեր» ("Panorama", 2 cilt. 1953-54)²⁸, «Կրկին այդ երգը» ("Hep O Şarkı", 1956)²⁹ վեպերը, «Իմ մոր գիրքը» ("Anamin Kitabı", 1957)³⁰, «Հայրենիքի ճանապարհին» ("Vatan Yolunda", 1958)³¹, «45 տարի քաղաքականության մեջ» ("Politikada 45 Yıl", 1968)³², «Երիտասարդությունը և գրական հջջողությունները» ("Gençlik ve Edebiyat Hatıraları", 1969)³³ հուշագրություն-վեպերը: 1955թ. թոշակի անցնելով և շրջելով երկրում, Քաղրին շարունակում է տարբեր թերթերի և պարբերականների համար հոդվածներ գրել: 1957թ. ստանձնում է «Ազգ» (Ulus) թերթի խմբագրի պաշտոնը: 1961թ. կրկին ընտրվում է որպես Սանիսայի պատգամավոր Ազգային մեծ ժողովում: Նա հրաժարվում է նաև ժողովրդահանրապետական կուսակցությունից, քանի որ համարում էր, որ վերջինս չեղվել է Աթաթուրքի սկզբունքներից: 1965թ. թողնում է քաղաքականությունը և ղեկավարում «Անադոլու» լրատվական գործակալությունը: 1974թ. ղեկտեսների 13-ին վախճանվում է Անկարայում:

²⁶ Սելբոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը Հանրապետական Թուրքիայում. Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2008, էջ 127-133:

²⁷ Karaosmanoglu, Yakup Kadri, Bir sürgün, İletişim Yayınları, İstanbul, 1983, 325s.

²⁸ Karaosmanoglu, Yakup Kadri, Panorama: bütün eserleri, İletişim Yayınları, İstanbul, 1987, 596s.

²⁹ Karaosmanoglu, Yakup Kadri, Hep O Şarkı, İletişim Yayınları, İstanbul, 1987

³⁰ Karaosmanoglu, Yakup Kadri, Yayınları, Anamin Kitabı İstanbul, 1987

³¹ Karaosmanoglu, Yakup Kadri, Vatan Yolunda, İletişim Yayıncılık İstanbul, 1993, 190 s.

³² Karaosmanoglu, Yakup Kadri, Politikada 45 yıl, İletişim Yayınevi İstanbul 1984, 303 s.

³³ Karaosmanoglu, Yakup Kadri, Gençlik ve Edebiyat hatıraları, İletişim Yayıncılık A.Ş. İstanbul 1990, 250s.